ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Երկրաբանություն և երկրի մասին XVII, № 6, 1964 Науки о Земле

ԽՐՈՆԻԿԱ

Ա. Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

20-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԸ

Այս տարվա հուլիսի 20-ից մինչև 28-ը Լոնդոնում կայացավ 20-րդ Միջազգային աշխարհագրական կոնգրեսը[*]*։ Սովետական աշխարհագետների 30 մարդուց բաղկացած պատվիրակությունը, որի կազմում էին նշանավոր ֆիզիկական և տնտեսական աշխարհագետներ, քարտեզագետներ, կլիմայագետներ, հիդրոլոգներ, գեոմորֆոլոգներ, բիոաշխարհագետներ և աշխարհագրության այլ բնագավառների ներկայացուցիչներ Լոնդոն ժամանեց հուլիսի 20-ին։*

Կոնգրեսի պաշտոնական բացումը տեղի ունեցավ հուլիսի 21-ին ժամը 10 անց կեսին Ալբերտհոլ նշանավոր համերգային դահլիճում։ Հակիրճ ճառով կոնգրեսը բացեց Անգլիայի թագուհի Ելիզաբեթ 2-ը, նշելով աշխարհագրության կարևոր դերը մարդկության կյանքում։ Նա հաջողություն ցանկացավ կոնգրեսի մասնակիցներին։

Կոնգրեսը ողջունեցին Միջազգային աշխարհագրական միության պրեզիդենտ Կ. Տրոլը և Բրիտանական արքայական աշխարհագրական ընկերության պրեզիդենտ, պրոֆ. Դ. Ստամպը։

Այնուհետև կոնգրեսի աշխատանքները շարունակվեցին նրա իններ՝ բնակչության և բնակավայրերի, տնտեսական աշխարհագրության, կլիմայագիտության, հիդրոլոգիայի, օվկիանոսագիտության և սառցաբանության, բիոաշխարհագրության, գեոմորֆոլոգիայի, պատմական աշխարհագրության, կիրառական աշխարհագրություն, ռեգիոնալ աշխարհագրության և քարտեզագրության սեկցիաներում։

Կոնգրեսի հետ միաժամանակ տեղի էին ունենում Միջազգային աշխարհագրական միության[**] *ղեկավար օրգանների և 17 հանձնաժողովների նիստեր։*

Առանձնապես ակտիվ անցան Տնտեսական շրջանացման, Ազգային ատլասների, Ծովափերի էվոլյուցիայի, Հողերի օգտագործման, Արիդ զոնայի, Աշխարհագրության դասավանդման և Բժշկական աշխարհագրության հանձնաժողովների նիստերը։

---

* *1 Միջազգային աշխարհագրական կոնկրեսը տեղի է ունեցել 1871 թ. Անավերպենում։ Այդ ժամանակից սկսած պարբերաբար 4 տարին մեկ աշխարհի գիտնական աշխարհագետները հավաքվում են միջազգային համաժողովի, որտեղ քննարկվում են այդ գիտության կարևորագույն պրոբլեմները։ Այս տարվա կոնգրեսը 3-ն էր Մեծ Բրիտանիայում (1895 թ. Լոնդոն, 1928 Քեմբրիջ)։*

** *Միջազգային աշխարհագրական միությունը (ՄԱՄ) հիմնադրվել է 1922 թ. աշխարհագրական ուսումնասիրությունները և պրոբլեմները կոորդինացնելու, միջազգային կոնգրեսները անցկացնելու և այլ նպատակներով։*

20-րդ Միջազգային աշխարհագրական կոնգրեսը հիմնականում նվիրված էր աշխարհագրության գործնական-կիրառական հարցերին, այդ պատճառով էլ, մեր կարծիքով, առանձապես աշխույժ անցան տնտեսական և կիրառական աշխարհագրության ու քարտեզագրության սեկցիաների աշխատանքները։ Առաջին երկու սեկցիաներում լայն կերպով քննարկվեցին նոր ազատագրված երկրների աշխարհագրությանը նվիրված բազմաթիվ հարցեր։ Հետաքրքիր է այն հանգամանքը, որ այդ երկրների աշխարհագետները հակահարված էին տալիս արևմտյան առանձին գիտնականների փորձերին զարգացող երկրների տնտեսական հետամնացությունը բնական պայմաններով և բնակչության ռանրնդունակ լինելով բացատրելուն։

Առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում շատ տեղերում կազմակերպված քարտեզագրական ցուցահանդեսները, որտեղ ներկայացված էին տարբեր երկրների քարտեղագրական արտադրանքի նմուշները, որոնց մեջ գերակշռում էին բնակչությանը և բնակավայրերին, ինչպես նաև հողօգտագործման պրոբլեմներին նվիրված քարտեզները և զանազան ատլասները։

Այդտեղ ցուցադրված սովետական աշխարհագրական և քարտեզագրական հրատարակությունների կոլեկցիան մեր պատվիրակությունը նվիրեց Անգլիայի արքայական աշխարհագրական ընկերությանը։

Սովետական աշխարհագետները ակտիվ կերպով մասնակցում էին բոլոր սեկցիաների և հանձնաժողովների աշխատանքներին։ Նրանց զեկուցումները մեծ հետաքրքրություն առաջացրին կոնգրեսի մասնակիցների մեջ։

Քարտեզագրության սեկցիայում կարդացվեց նաև «Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ազգային ատլասները» թեմային նվիրված զեկուցումը (դոց. Ա. Ֆ. Ասլանիկաշվիլի, պրոֆ. Ա. Բ. Բաղդասարյան և պրոֆ. Ս. Հ. Ռուստամով)։

Տեղի ունեցան Միջազգային աշխարհագրական միության զեկավար օրգանների ընտրությունները։ Միության պրեզիդենտ ընտրվեց նշանավոր հնդիկ աշխարհագետ, Կալկաթայի համալսարանի պրոֆեսոր Ս. Ռ. Չաթերջին, որը 1958 թվականին այցելել էր Սովետական Հայաստան։ Փոխպրեզիդենտներից մեկն ընտրվեց սովետական ակադեմիկոս Ի. Պ. Գերասիմովը։ Սովետական շատ գիտնականներ ընտրվեցին Միջազգային աշխարհագրական միության զանազան սեկցիաների նախագահ, անդամ և թղթակից անդամ (տողերիս հեղինակը ընտրվեց ՄԱՄ Ազգային ատլասների հանձնաժողովի թղթակից անդամ)։

Կոնգրեսն ավարտելուց հետո Սովետական պատվիրակությունը շրջագայություն կատարեց Մեծ Բրիտանիայի հյուսիսային և կենտրոնական մասերում։

Օգտվելով առթից, ես և պրոֆեսոր Խ. Պ. Պողոսյանը Լոնդոնի հայ տանը հանդիպում ունեցանք քաղաքի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ և նրանց պատմեցինք Սովետական Հայաստանի նվաճումների մասին։

ՀՍՍՌ ԳԱ Երկրաբանական գիտությունների
ինստիտուտ, Աշխարհագրության սեկտոր

Ընդունված է 29. VIII. 1964.